

Նարինե Մ. Նուշերվանյան

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏՈՒՐՔԻ» ԳԱՂԱՓԱՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Եվ նրա գործադրման փորձերը
Առաջին Հանրապետության շրջանում*

Բանալի բառեր – համայնք, ներգաղթ, Հայաստանի Հանրապետություն, Գաղութային բաժին, օժանդակող միություններ, ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչներ, «Հայրենիքի տուրք», հայկական հպատակություն, Եգիպտահայ նպաստամատույց մարմին, Ազգային սահմանադրություն:

Մուտք

Առաջին աշխարհամարտից հետո հայության ողջ մնացած հատվածը ցրված էր աշխարհով մեկ, ուստի Հայաստանի Հանրապետության իշխանությունները պետության կայացման գործում իրենց գերակա խնդիրը համարեցին գաղթավայրերի հետ հարաբերությունների զարգացումը և նրանց աջակցությունն ապահովելը¹:

Իր գոյության հենց սկզբից ՀՀ ղեկավարությունը մեծապես կարևորում էր գաղթավայրերի հետ կապը, բայց դեպքերի բերումով դրանց ինստիտուցիոնալ բովանդակություն հաղորդեց միայն 1920 թվականին: Կարևորելով գաղթավայրերի հետ հարաբերությունների հաստատումն ու ցեղասպանությունից փրկված գաղթականությանը աջակցելը՝ Հայաստանի նախարարների խորհուրդը 1920 թ. օգոստոսի 27-ի նիստում որոշեց հայ գաղթավայրերի նյութական և բարոյական ներուժը Հայաստանի Հանրապետության օգտին կիրառելու, դեպի երկիր հայության ներգաղթը կազմակերպելու և Հայաստանի վերաշինության գործին նրանց օժանդակությունը ապահովելու նպատակով Արտաքին գործոց նախարարության² կազմում բացել **Գաղութային բաժին**³՝ որդեգրելով գործունեության հետևյալ ուղ-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 7.06.2019:

1 Տե՛ս **Եղիազարյան Ա., Անանյան Մ. և ուրիշներ**, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Եր., 2017, էջ 43-67:

2 Գաղութների և գաղթականության խնդիրների կարգավորմանը հիմնականում զբաղվում էր ՀՀ արտաքին գործերի նախարարությունը: Տե՛ս **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրոյթ, տպ. «Համագգային», 1968, էջ 140:

3 Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., գլխ. խմբ. **Ա. Վիրաբյան**, Հայաստանի ազգային արխիվ, 2014, էջ 546, տես նաև ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 618, թ. 6:

ԺԱ (ԺԷ) փաթիլ, թիվ 2 (66), փաթիլ-հունիս, 2019
ՎԿՎ համահայկական հանդես

ղությունները.

- **գաղթավայրերի պատմության և նրանց ներկա վիճակի ուսումնասիրություն,**
- **գաղթավայրերի հայության վիճակագրության կազմում,** որը հիմք ընդունելով՝ համապատասխան միջոցներ են ձեռք առնվում հետզհետե նրանց ներգաղթը կազմակերպելու համար⁴,
- **ՀՀ արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցիչների հսկողության տակ Հայաստանին օժանդակող միությունների կազմակերպում Հայաստանի վերաշինության և ներգաղթի գործին աջակցելու համար,**
- **գաղթավայրերի և ՀՀ միջև սերտ կապի հաստատում.** այս նպատակի համար Հայաստանում և համայնքներում իրականացվում է իրավիճակների փոխադարձ ծանոթացում՝ ձգտելով ազգային ինքնաձանաչության և ներգաղթի տենչ առաջացնել գաղութների հայության մեջ,
- **ՀՀ ռազմական նախարարի հրահանգներին համապատասխան՝ գորահավաք մարմինների կազմակերպում** և ամեն կերպ աջակցում Հայաստան եկող զինվորներին, թե՛ ձանապարհին և թե՛ երկիր հասնելու ժամանակ, այդ թվում՝ համապատասխան նախարարությունների գիտությամբ՝ անհրաժեշտ մասնագետների ցուցակագրում և հրավիրում Հայաստան,
- **դեպի Հայաստան գաղութային կապիտալի հոսքի աջակցում՝** Հայաստանում դրամատներ գործելու և ՀՀ հյուպատոսների միջոցով արդյունաբերական և առևտրական ընկերություններ կազմակերպելու նպատակով⁵:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ ԱԳՆ կազմում ստեղծված Գաղութային բաժինը զգալի դերակատարություն է ունեցել գաղթավայրերի և գաղթականության կյանքի կազմակերպման, հայության համախմբման, հայրենիքի հետ կապի ապահովման, այդ կապերի ամրապնդման, Հայաստանի վերաշինության և հայության ներգաղթի կազմակերպման հարցում: Եվ այս կառույցի գործունեության շրջագծում հույժ հետաքրքրական է «Հայրենիքի տուրք»-ի գաղափարը, որի ծագման պատմությունն ու կիրառման մեխանիզմները կներկայացնենք ստորև:

1. «Հայրենիքի տուրքի» գաղափարի ծագումը

1860 թ. Արևմտահայոց Ազգային սահմանադրությամբ⁶ սահմանվել և ավելի ուշ Հայոց եկեղեցական իրավունքում⁷ ամրագրվել է օրենք «Ազգա-

4 Արտասահմանի հայության ներգաղթի մասին մշակվում էին առանձին հրահանգներ՝ Խնամատարության նախարարության ներգաղթի և վերաշինության բաժնի հետ համատեղ:

5 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 566, թ. 6:

6 Ազգային սահմանադրությունն ընդունել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը 1860-ի մայիսի 24-ին, սակայն սուլթանական կառավարությունը մոտ 3 տարվա ձգձգումից հետո՝ էական կրճատումներով այն վավերացրել է միայն 1863-ի մարտի 17-ին (թուրքերեն կոչվում էր «Հայ ազգի կանոնադրություն»):

7 Տե՛ս Հայոց եկեղեցական իրավունքը. Ա. Գիրք, աշխատություն **Ն. Վ. Մելիք-Թանգեանի**, Շուշի, տպ. «Եղիսաբեթ Մ. Մահտեսի-Յակոբեանցի», 1903, էջ 769-770:

յին տուրքի» գանձման վերաբերյալ՝ բաղկացած 4 հոդվածից: Այդ օրենքով սահմանվում էր, որ շահույթ ունեցող ամեն չափահաս մարդ պետք է մասնակից դառնա տարեկան սկզբունքով հավաքվող ազգային տուրքին, որը 2 տեսակ է լինելու՝ ընդհանուր (հավաքվում է պատրիարքարանի կողմից ու բաշխման եղանակը որոշվում է Կ. Պոլսում՝ Քաղաքական ժողովով) և մասնավոր (հավաքումն ու բաշխումը ամեն թաղ իր խորհրդում է որոշում)⁸: Այսինքն՝ նախատեսվում էր, հաշվի առնելով յուրաքանչյուր անհատի կարողության չափը, Օսմանյան կայսրության տարածքում հավաքել տարեկան տուրք յուրաքանչյուր չափահաս հայից: Անգամ վերոնշյալ տուրքի գանձման համար 1880-ական թթ. մարդահամարի տվյալների հիման վրա Ստամբուլի նահանգում կազմվեց ցուցակ՝ 30.000 հայ տղամարդու անունից բաղկացած⁹:

Սակայն, ինչպես փաստում են աղբյուրները, այս պարտավորիչ տուրքի նպատակներից (կրթական գործը ժամանակի պահանջներին համապատասխանեցնել, ընդհանուր նախնական կրթություն տալ, միջնակարգ կրթությունը զարգացնել, վարժարաններ բացել, արդեն իսկ բացվածների աշխատանքը ապահովել, վանքերը կողոպուտից ազատել և կրթական օջախներ դարձնել, հիվանդանոցներ հիմնել) և ոչ մեկը չիրագործվեց¹⁰: «Ազգային տուրքի» գանձման օրենքի սահմաններում աշխատանքը ոչ հսկվեց, ոչ հաշվետվություններ կազմվեցին, և ոչ էլ բյուջե կազմվեց, ինչպես նախատեսվում էր: Ընդհանուր ժողովը, թեև, սահմանադրության համաձայն իր սովորական նիստերը պիտի գումարեր երկու տարին մեկ անգամ, երկու ամիս ունեցավ տևական նիստեր՝ առանց, սակայն, իր հիմնական պարտականություններով զբաղվելու. «Անվերջ վճճեր, երկպառակություններ, օրակարգեր, էնդրիկներ, փայլուն, օդային ծրագիրներ ու առաջարկներ, քննադատություններ, բայց երբէք գործնական աշխատանք ու արդիւնք»¹¹:

Չնայած անցյալի անհաջողությանը, նմանատիպ պարտադրական բնույթի տուրքի գաղափարն առաջ է քաշվել արդեն ավելի ուշ՝ Հայոց ցեղասպանությունից հետո, որի կիրառման արդյունքները սպասել չեն տվել: Այսպես, 1918 թ. զինադադարից հետո Կ. Պոլսում հազարներով այրիներ ու որբեր էին մնացել, որոնց պատսպարելու և կերակրելու պարտականությունը մայրաքաղաքի տեղահանությունից զերծ մնացած հայությունը իր պարտականությունը համարեց: Նախ՝ կազմվեցին ընկերություններ, որոնց մեջ գլխավորները եղան «Որբախնամ» և «Տարեգրելոց» ընկերություններն ու «Հայ կարմիր խաչը»: Առաջին երկուսը միացան 1919 թ. փետրվարի 28-ին և կազմեցին «Հայ ազգային խնամատարությունը», իսկ վերջինը իր գոյությունը պահեց իբրև Միջազգային Կարմիր խաչի անդամ¹²: Արդյունքում

8 Տե՛ս Ազգային Սահմանադրություն Հայոց, տպագր. Ջարեհ Ն. Պերպերեանի, Կ. Պոլիս, 1908, էջ 50-51:

9 Տե՛ս **Ohanian D.**, Collaboration in Ottoman Governance: The c. 1907 Imperial Census and the Armenian Apostolic Patriarchate of Istanbul, "Journal of the Ottoman and Turkish Studies Association", Published by Indiana University Press, Vol. 4, No. 2 (November 2017), էջ 377:

10 Տե՛ս **Ատոմ**, Ազգային սահմանադրությունը. Գիծեր մեր մշակոյթի պատմութենէն, Պատմական և քննադատական ուսումնասիրություն, Կ. Պոլիս, 1914 / <https://goo.gl/jBLCos> / (մուտք՝ 03.04.2019):

11 Նույն տեղում:

12 Տե՛ս **Ջաէն Արբեաւ.** Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ և վկայութիւններ, Գահիրէ, տպ. «Նոր աստղ», 1947, էջ 280, տե՛ս նաև՝ **Ekmekcioglu L.**, Recovering Armenia: The Limits of Belonging in Post-Genocide

Պոլսում ապաստանած և գավառների մեջ հաստատված մոտ 800.000 տարագիրներին և 70.000 որբերին օգնելու համար «Հայ ազգային խնամատարությունը» կազմում է Խնամատարական կենտրոնական մարմին՝ հարյուրավոր մասնաձյուղերով, հաստատվում են գաղթականների կայաններն ու որբանոցները:

Ոգևորության ազդակ է դառնում Ազգային խնամատարության կենտրոնական վարչության կողմից 1919 թ. մայիսի 19-ին հայ ժողովրդին ուղղված կոչը. «Տու՛ր ուրեմն, հայ ժողովուրդ, քանի հրամայողական է պահանջքը, տու՛ր քու լումադ, և լիաբուռն տուր այս անգամ, չափելով մեծությիւնն աղէտին: Քու խնամքդ ու գուրգուրանքդ անպակաս ըրէ և գիտցիր տաքցնել հայ սիրտերը հոգեվարք, հայ մարմինն աղաչուն»¹³: Կոչում ասվում էր, որ տուրքը ողորմություն չէ, այլ՝ **պարտականություն, պարտք սեփական ազգի գավակներին, որոնց ձեռք մեկնել է անհրաժեշտ և սատարել սեփական գավակի կամ ազգականի պես**: «Նայէ՛ անոնց վրայ, վիշտը քու մորթիդ վրայ անոնց պէս զգալու համար: Եւ ողորմութիւն չէ տալիքդ. քու պարտքդ է զոր պիտի հատուցանես, ինչպէս պիտի ընէիր ծոցածին գաւկիդ՝ օտարութեան մէջ աղէտակոծ, կամ մէկ ազգականիդ՝ բախտէն ուժգին ապտակուած: Եւ ազգական ու ազգային մէկ բառ, մէկ արմատ չէն միթէ: Ամօթ է որ եղեռնի սարսափներէն հրաշքով ազատող Ազգիդ այդ գաւակները ենթարկուին նոր պատուհասի մը, իրական մահուան. ամօթ է որ նոյն բազմաչարչար հերոս ազգին անունն ու արիւնը կրողներս թոյլ տանք որ մեր աչքին տակ սովամահ կորնչին անոնք...»¹⁴:

Այս կոչը վավերացվում է երեք դավանությունների հոգևոր այրերի (Հայ ավետարանական եկեղեցու ազգապետ Զենոբ Ա. Պեգճյան, Հայ կաթոլիկ եկեղեցու արքեպս. Սայեդյան, հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոս) հետևյալ հայտարարությամբ. «Մենք, հոգևոր պետերս Տաճկահայաստանի, կու գանք աւելցնել թէ անպատասպար և անսուաղ մնացած եօթանասուն հազար որբեր և ութ հարիւր հազար տարագիրներ կան դեռ՝ անմիջական խնամքի և ձեռնտուութեան ակնդէտ: Լիայոյս ենք որ, այս պարագան ալ նկատի ունենալով և կարդալով Ազգ. Խնամատարութեան կողմէ ՀԱՆՈՒԲ ՀԱՅՈՒԹԵԱՆ ուղեւալ սրտագին սոյն կոչը, ամէն անհատ անտեղիտալի պարտք մը պիտի սեպէ բուխսիրտ նպաստի յօժարափոյթ իր մասնակցութիւնը բերել վերոյիշեալ հասցէին, ընդունելով մեր օրհնութեանց հետ՝ տառապահիւժ կարօտեալներու խորին շնորհակալիքը»¹⁵: Այս կոչից հետո գործի ընթացքը երկար չտևեց. Ազգային խնամատարությունը սկսեց գանձումներ կատարել. 1919 թ. ապրիլի 11-ից մինչև օգոստոսի վերջ հավաքված գումարը կազմում էր 106904.56^{1/2} օսմ. ոսկի¹⁶: Հրատարակվում է առաջին վեցամսյա ընդհանուր տեղեկագիրը 1919 թ. մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանի համար, և այստեղ գետեղվում են հանգանա-

Turkey (Stanford: Stanford University Press, 2016), էջ 27.

13 1915-1965 յուշամատենան Մեծ եղեռնի, պատրաստեց **Ահարոնեան Գ.**, տպ. «Ատլաս», Պեյրոյթ, 1965, էջ 941:

14 Նույն տեղում:

15 Նույն տեղում:

16 Տե՛ս **Էպիդարեան Մ.**, Ազգային խնամատարութիւն. ընդհանուր տեղեկագիր, Անթիլիաս-Լիբանան, 1985, էջ 75:

կույթուններից գոյացած գանձումների ցուցակները¹⁷:

Հաջորդ 3 ամիսները Խնամատարությունը անցկացնում է առանց դրամահավաքի, և տեսնելով, որ հանգանակություններով հնարավոր չէ այդ տեսակ ընդարձակ գործ ձեռնարկել, 1919 թ. սեպտեմբերի սկզբին Ազգային ընդհանուր ժողովը¹⁸ օրենք ընդունեց, որի համաձայն եկամուտ ունեցող ամեն հայ անհատ, պարտավոր էր իր նյութական կարողության չափով տուրք վճարել այդ ամսից սկսած¹⁹: Սրանով ոչ միայն պիտի հոգ տարվեր այն ազգակիցների կարիքները, որոնք թշվառ և անապաստան էին մնացել, մինչև որ կարողանան վերահաստատվել իրենց հայրենիքում, այլ նաև ապահովվել ՀՀ դիվանագիտական հարաբերությունների ծախսերը²⁰: Այսինքն, կարևորվում էր հայրենի պետության գոյության փաստը, կապը գաղթավայրերի հետ: **Այդ պատճառով այս տուրքը «Հայրենիքի տուրք» կոչվեց**²¹: Այն վճարվելու էր երկու ձևով՝ միանվագ և ամսական: Թաղերում կազմված հանձնաժողովները որոշում էին յուրաքանչյուր հայ անհատի նյութական կարողությունը և իր տալիք տուրքը: Պատրիարքարանը իրեն դիմողներից սկսեց այդ տուրքի վճարման ստացականը պահանջել և չներկայացնողներին զլացավ իր օժանդակությունը տալ: Պոլսի եկեղեցիների Թաղական խորհուրդները զլացան մկրտության, ամուսնության և թաղման հանդիսությունը նրանց, ովքեր նյութական կարողություն ունեին և չէին ներկայացրել «Հայրենիքի տուրքի» ստացականը²²:

Այս օրենքի գործադրությունը հանձնվեց Ազգային կենտրոնական Ելևտական հանձնաժողովին, որի գրասենյակը ընտրվեց Ղալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցին, իսկ գոյացած գումարների մատակարարությունը կատարում էր Ազգային խնամատարությունը, որն անջատ մարմին էր և ուներ իր գրասենյակը Բերայի Ս. Երրորդություն եկեղեցու բակում: 1922 թ. հունիսի 2-ին Ազգային պատվիրակությանը ուղարկած հաշվետվության համաձայն որբերի ու տարագիրների համար զինադադարից սկսած մինչև 1921 դեկտեմբերի վերջ Կ. Պոլսում հավաքվել է 1.536.157 օսմ. ոսկի²³: Այսպես դրամահավաք և մատակարար մարմինները անջատվեցին. «Հայրենիքի տուրքի» գանձումը հանձնվեց Ելևտական հանձնաժողովին, իսկ հաստատությունների²⁴ մատակարարելու պարտականությունը առաջվա պես մնաց Ազգային խնամատարությանը²⁵:

Այսպիսով, «հայրենիքի տուրքի» գանձման գաղափարը ծագեց Կ. Պոլսում հաստատվելով Արևմտահայոց ազգային սահմանադրությամբ և օրենքի ուժ ստացավ Հայոց եկեղեցական իրավունքում, սակայն այն գործնական հիմքերի վրա դրվեց միայն Հայոց ցեղասպանությունից հետո: Փրկված տարագիրներին, որբերին օգնելու, աջակցելու համար իրագործվեց և կառուց-

17 Տես նույն տեղում, էջ 500-502:

18 Տես Ազգային Սահմանադրություն Հայոց, էջ 38-40:

19 Տես **Զաւէն Արքէպս.**, նշվ. աշխ, էջ 280:

20 Տես **Ekmekçiođlu L.**, նշվ. աշխ, էջ 27-28:

21 Տես նույն տեղում, էջ 281:

22 Տես նույն տեղում:

23 Տես նույն տեղում, էջ 283:

24 Տես **Էպիղաթեան Մ.**, նշվ. աշխ, էջ 503-506:

25 Տես նույն տեղում, էջ 75:

վածքային բնույթ կրեց «հայրենիքի տուրքի» գանձումը՝ ոչ որպես ողորմություն, այլ պարտականություն: Հատկանշական է այն, որ այստեղ տուրքի գանձումը կանոնավոր բնույթ ու հսկողություն ուներ, ինչը տեսանելի արդյունք էր ապահովում և նպաստում էր տարագիրներին, որբերին օգնելու նպատակի իրագործմանը: Եվ հետագայում էլ միայն Կ. Պոլսի պատրիարքարանը որոշ չափով պահպանեց «հայրենիքի տուրքի» գանձումը՝ իր պարտականությունը համարելով ոչ թե պատահական, այլ կանոնավոր վճարումներ կատարելու՝ հայ որբերի կարիքները հոգալու համար:

2. «Հայրենիքի տուրքի» գանձումը հայկական գաղթավայրերում

Գաղթականությանը օգնելու համար պատրաստական էին նաև արտասահմանի մյուս հայ գաղթավայրերը, ավելին, անկանոն հանգանակությունները սկսեցին փոխարինվել պարտադիր վճարով՝ հենց «հայրենիքի տուրք» անվամբ. նպատակը մեկն էր՝ օգնել Հայոց ցեղասպանության հետևանքով անապաստան ու որբ մնացած հայ տարագիրներին:

«Վերածնունդ» փարիզահայ ամսաթերթը, հիշատակելով Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղթավայրում հավաքվող հանգանակությունների մասին²⁶ և հղելով ամերիկահայ թերթերին առ այն, որ այնտեղի հայրենակիցները որոշել են ազգային տուրքի դրություն հաստատել՝ օգնելու հայրենիքի կարոտյալներին և նպաստելու Հայաստանի վերաշինության գործին²⁷, փաստում էր, որ դեռևս 1915-ից Փարիզում հաստատված է «Ազգային տուրքի դրությունը»:

Փարիզի առաջնորդ սրբազան Վռամշապուհ Քիպարյանին ուղղած իր նամակում Արշակ Չոպանյանն առաջարկում է մերթ ընդ մերթ հանգանակությունների փոխարեն ազգային տուրքի ամսական վճարման համակարգ ներմուծել և կոչ ուղղել գաղթավայրի բոլոր անդամներին, որ ամսական գումարով մասնակցեն համազգային հանգանակությանը: Ընտրվեց գործադիր մարմին, կոչ ուղղվեց գաղթավայրին և սկսվեց ամսավճարների արձանագրումը: Երկու տարվա ընթացքում հավաքվել է 31.000 ֆրանկ, որը մաս առ մաս հանձնվել է Պողոս Նուբար փաշային՝ ավելացնելու Ազգային հիմնադրամի հանգանակությանը և ուղարկելու Կովկասի հայ փախստականներին ու Միջագետքի տարագրյալներին²⁸: Այս նպատակով 1918 թվականին առանձին մասնախումբ կազմվեց՝ Վռամշապուհ Քիպարյանի նախագահությամբ²⁹: Մասնախմբի անդամ Ա. Չոպանյանը մարտի 2-ին կազմակերպված հավաքին կրկին կոչ արեց Փարիզի հայությանը կատարել պարտքը և աղետյալներին օգնելու համար մասնակցել պարտադիր վճարին³⁰:

Ավելի ուշ Փարիզի «Ապագայ» շաբաթաթերթից տեղեկանում ենք, որ

26 Տե՛ս Ամերիկահայ գաղութներ, «Վերածնունդ», Փարիզ, 1917, հուլիսի 14, N 1, էջ 29-30:

27 Տե՛ս Նօթեր, Ազգային տուրք-կոչ մը, «Վերածնունդ», Փարիզ, 1917, օգոստոսի 14, N 2, էջ 54:

28 Տե՛ս նույն տեղում:

29 Տե՛ս Փարիզի հայկական նպաստամատոյց յանձնաժողով, «Վերածնունդ», Փարիզ, 1918, N 6,7, էջ 155-157:

30 Տե՛ս նույն տեղում:

1918 թվականի գինադադարից առաջ ինչ-ինչ պատճառներով դադարեցվել է «հայրենիքի տուրքի» կանոնավոր գանձումը, թեև 1922-ին ակնկալվում է նորից վերսկսել³¹: Փարիզի հայ գաղթավայրում հազիվ 50 հոգի են մասնակցում տուրքի գանձմանը և ամսական միայն 20.000 ֆր. գումար է հավաքվում³²:

Փարիզի հայկական համայնքին զուգահեռ «Եգիպտահայ նպաստամատույց մարմինը»³³, 1917 թ. ընդառաջ գնալով ըոպեի պահանջին, հրապարակ է իջնում հայտարարությամբ, որը սրտառույց կոչ լինելուց առավել պարտականության հրավեր էր. «Կը բաւէ որքան մուրացինք յանուն մեր նահատակներուն, մեր ստորագրեալներուն, մեր կամաւորներուն: Ամոթ մըն էր արդարև ասոր սեղանին փշրանքները մուրալ, անոնց համար որ, դեռ երէկ, հարուստ էին և որոնց այրիները և որբերը այսօր անապատներուն մէջ անսուաղ կը մեռնին: Նպաստամատույցը, իր որդեգրած վեհ ուղղությամբ, կը խոստանայ մեր վրդովեալ խիղճերը ազատել այս տխուր մղձաւանջէն. ողորմութիւն պիտի չի հայցէ, այլ տուրք պիտի պահանջէ: «Հայրենիքի տուրքը», ահա թէ ինչ անունով անիկա կը պատրաստուի ափ առնել մեր դուռները»³⁴): Ըստ Նպաստամատույցի սա արյան տուրքն է, քանի որ արյուն թափողների համար է, որ արյուն չթափողները պիտի տան³⁵: Նպաստամատույցը ձևավորում է պատվիրակություն, որը շրջելով տարբեր գավառներում՝ բացատրում է «**հայրենիքի տուրքի**» նշանակությունն ու **յուրաքանչյուրի գրանցվելու կարևորությունը**: Հայությունը մեծ խանդավառությամբ է ընդունում այս գաղափարը, և առաջին գրանցվողները նույնիսկ իրենց կարողություններից ավելին էին տալիս, կազմվում էին ցուցակներ, որոնք պարբերաբար տպագրվում էին «Արև» օրաթերթի համարներում³⁶: Նպաստամատույց մարմինը տպագրում էր նաև ընդհանուր մուտքի ու ելքի ամփոփ ամսական հաշվետվություն³⁷: Մեկ տարի անց Վահան Թեքեյանը, անդրադառնալով «հայրենիքի տուրքի» գանձմանը և կրկին նշելով նպատակները, այն է՝ անմիջականորեն աջակցել Կովկասում ապաստանած փախստականներին, Կովկասի կամավորական շարժմանը և առաջիկայում օգնել Թուրքիայի տարագիրներին, փաստում էր, որ առաջին տարվա ընթացքում հավաքված գումարի արդյունքը գոհացուցիչ է, իսկ երկրորդ տարվա ընթացքում ակնկալվում էր հավաքել առնվազն հիսուն հազար ոսկի³⁸: Նպաստամատույցը շարունակեց նոր հանգանակություններ

31 Տե՛ս Հայրենիքի տուրքը, «Ապագայ», Փարիզ, 1922, սեպտեմբերի 2, N 58, էջ 2:

32 Տե՛ս Խմբագրական «Ազգային տուրք», «Վերածնունդ», Փարիզ, 1919, N 6-7, էջ 86:

33 Ցեղասպանությունից փրկված բազմահազար գաղթականների օգնության գործն ավելի արդյունավետ դարձնելու համար 1915 թ. վերջին է հիմնադրվել այս կառույցը, որը մեկտեղում էր տարբեր քաղաքական հոսանքների և հարանվանությունների ներկայացուցիչներին: Գործել է մինչև 1920 թ.: Տե՛ս Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Եր. 1978, էջ 174:

34 **Մալէզեան Վ.**, Արևիկի տուրքը, «Արև», Աղեքսանդրիա, 1917, մայիսի 4, N 152, էջ 1, տե՛ս նաև՝ Եգիպտահայ նպաստամատույց մարմինի կոչը Եգիպտահայ հասարակութեան, «Արև», Աղեքսանդրիա, 1917, յուլիսի 2, N 23, էջ 1:

35 Տե՛ս նույն տեղում:

36 Տե՛ս «Հայրենիքի տուրքը» գաւառներուն մէջ, «Արև», Աղեքսանդրիա, 1917, դեկտեմբերի 3, N 89, էջ 3, տե՛ս նաև՝ դեկտեմբերի 5, N 90, էջ 3:

37 Տե՛ս Ամսական հաշիւ նպաստամատույց մարմնոյ, «Արև», Աղեքսանդրիա, 1918, օգոստոսի 26, N 45, էջ 3:

38 Տե՛ս Թեքեյան Վ., «Հայրենիքի տուրք»-ին երկրորդ տարին, «Արև», Աղեքսանդրիա, 1918, սեպտեմբերի 11, N 52, էջ 1:

հավաքել, 1918–1919 թթ. տպագրվեցին նոր ցուցակներ ու հաշվետվություններ³⁹, այդուհանդերձ, ի տարբերություն Կ. Պոլսի, որտեղ տուրքի գանձումը կատարվում էր և՛ միանվագ, և՛ միաժամանակ ամսական կանոնավոր վճարումների տեսքով, արտասահմանի հայության շրջանում պահպանվեցին միայն անկանոն նվիրատվություններ⁴⁰: Մինչդեռ ակնկալվում էր «հայրենիքի տուրքը» օգտագործել ոչ միայն Հայաստանին ու գաղթականությանը օգնելու, այլև որոշ բաժին հատկացնելու տեղական կրթական և բարեգործական ձեռնարկներին⁴¹: Չիրաժարվելով սույն գաղափարից՝ «Եգիպտահայ նպաստամատույց մարմնի» ձևավորած պատվիրակությունը ուղևորվում է նաև արտասահմանյան գաղթավայրեր, որտեղ թերևս նույն պատկերն էր. ի սկզբանե ոգևորությունը մեծ էր, սակայն վճարումները այդպես էլ կանոնավոր բնույթ չէին կրում⁴²: Ինչքան էլ բարձրաձայնվում էր, որ «ազգին որբերը միայն պոլսահայուն չեն պատկանին և ինչպես պոլսահայը իրեն պարտականություն սեպած է միանվագ տուրքից զատ ամսական կանոնավոր վճարում անել, այդպես էլ արտասահմանի ուրիշ տեղեր գտնվող հայերը պետք է պարտականություն սեպեն իրենց ոչ թե պատահական, այլ կանոնավոր վճարումներ անելու»⁴³, այնուամենայնիվ, գաղթավայրերում հայրենիքի տուրքի գանձումը չհամակարգվեց և չկիրառվեց՝ նախապես մշակված ծրագրերին ու նպատակներին համապատասխան:

3. «Հայրենիքի տուրք»-ի գաղափարը և մեխանիզմը Առաջին Հանրապետության շրջանում

Գաղթավայրերում առկա այս անկանոն վճարումներն ու նվիրատվությունները կանոնակարգելու և կիրառելիության նպատակները հստակեցնելու համար Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը մշակում է մի օրինագիծ, ըստ որի արտասահմանյան բոլոր գաղթավայրերում կազմակերպվելիք **ՀՀ օժանդակող միությունները**, որոնք գործում էին ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների կամ նրանց կողմից նշանակված գաղթավայրերում գործերի վարիչների հսկողության ներքո, գանձելու էին «հայրենիքի տուրք» բոլոր հայերից՝ անկախ նրանց ՀՀ քաղաքացիներ կամ օտարահպատակներ լինելուց:

ՀՀ օժանդակող միությունները ունեին Հայաստանին օժանդակելու հիմնավոր նպատակներ՝ նյութապես և բարոյապես օժանդակել Հայաստանի Հանրապետության վերաշինության և ներգաղթի գործին, աջակցել Թուրքիայում ապրող տարագիրներին⁴⁴: Այս նպատակների իրագործման համար «հայրենիքի տուրքի» գանձումը կազմում էր միությունների առաջնային

39 Տե՛ս Նպաստամատույցի նոր հանգանակությունը, «Արև», Աղեքսանդրիա, 1918, հունվարի 7, N 104, էջ 3, տե՛ս նաև նոյեմբերի 11, N 78, էջ 3:

40 Տե՛ս Հայրենիքի տուրքը արտասահմանի մէջ, «Արև», Աղեքսանդրիա, 1921, հոկտեմբերի 24, N 74, էջ 2:

41 Տե՛ս Հայրենիքի տուրք, «Արև», Աղեքսանդրիա, 1923, մարտի 13, N 77, էջ 2:

42 Տե՛ս Կիպրահայ կեանքէն, «Արև», Աղեքսանդրիա, 1918, մարտի 6, N 128, էջ 1, տե՛ս նաև՝ Ազգային քրոնիկ, «Արև», Աղեքսանդրիա, 1919, փետրվարի 19, N 120, էջ 3, տե՛ս նաև «Հայրենիքի տուրք»ի պատվիրակությունը Պուրթէշի մէջ, «Արև», Աղեքսանդրիա, 1921, դեկտեմբերի 14, N 96, էջ 3:

43 Հայրենիքի տուրքը արտասահմանի մէջ, «Արև», Աղեքսանդրիա, 1921, հոկտեմբերի 24, N 74, էջ 2:

44 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 566, թ. 1:

գործառույթներից մեկը⁴⁵:

Միության կանոնագրի նախագծի 6-րդ գլուխը ամբողջությամբ վերաբերում էր «հայրենիքի տուրքի» գանձմանը. ըստ 17, 18 և 19-րդ հոդվածների՝ միության և առհասարակ գաղթավայրի բոլոր անդամները պարտավոր էին ամսական վճարել «հայրենիքի տուրք»: Այն անդամները, որոնք չէին վճարի «հայրենիքի տուրք» կզրկվեին ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների և հյուպատոսների ամեն տեսակի աջակցությունից, իսկ միության անդամները՝ ընտրելու և մասնաձյուղերում կամ կենտրոնական վարչությունում անդամ ընտրվելու իրավունքից⁴⁶:

Այս կերպ հավաքած «հայրենիքի տուրքը» նախատեսվում էր բաժանել ֆոնդերի.

Նախ՝ տուրքի 20 %-ը նախատեսված էր հետևյալ նպատակների համար.

10 %-ը՝ դիվանագիտական ներկայացուցչությունների ֆոնդ, որը կենտրոնանալու էր մեկ վայրում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի ղեկավարությամբ: Այս ֆոնդից գումարներ էին հատկացվելու այն դիվանագիտական ներկայացուցիչներին, որոնք տեղական հասույթով չէին կարող իրենց ծախսերը ամբողջովին հոգալ:

5 %-ը՝ Գաղութային բաժնի շրջիկ ներկայացուցիչների ծախսերի համար,

5 %-ը՝ չնախատեսված ծախսերի համար:

Մնացյալ գումարը բաշխվում էր հետևյալ կերպ.

30 %՝ բանակի ֆոնդ. այս ֆոնդից ծախսվելու էր նաև արտասահմանից Հայաստան գինվորներ փոխադրելու համար,

25 %՝ Թուրքիայում ապրող հայերի օգնության համար,

45 %՝ ներգաղթի և արտասահմանից մասնագետներին դեպի Հայաստան փոխադրելու համար⁴⁷:

«Հայրենիքի տուրքից» գոյացած ֆոնդերի համար առանձին հաշիվ էր պահվելու: Այս գումարները դրվում էին Գաղութային բաժնի հսկողության տակ և ծախսվում կամ փոխանցվում Գաղութային բաժնի հրահանգներով՝ արտաքին գործերի նախարարի հրամանի համաձայն: Դրանք բաշխվելու էին կենսական կարևորություն ունեցող հետևյալ ուղղություններում. **Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող հայերի օգնության ֆոնդերը** կենտրոնանալու էին ՀՀ Կ.Պոլսի Լիազորի ձեռքում և օգտագործվելու էին Գաղութային բաժնի գիտակցությամբ: **Ներգաղթի և դեպի Հայաստան տեղափոխվող մասնագետների ֆոնդերը** մնալու էին գաղթավայրերի դիվանագիտական ներկայացուցիչների տրամադրության տակ: **Բանակի ֆոնդերը** կենտրոնացած էին ՀՀ ռազմական նախարարի ձեռքում և գործածվում էին նրա կարգադրությամբ՝ Գաղութային բաժնի միջոցով: Իսկ **Գաղութային բաժնի շրջիկ ներկայացուցիչների ծախսերը** և չնախատեսված ծախսերի ֆոնդերը ևս օգտագործվելու էին Գաղութային բաժնի հրահանգներով՝ ԱԳ նախարարի կարգադրության համաձայն⁴⁸:

45 Տես նույն տեղում:

46 Տես նույն տեղում, թ. 2:

47 Տես նույն տեղում, թ. 7:

48 Տես նույն տեղում:

Դիվանագիտական ներկայացուցիչները պարտավորվում էին Արտաքին գործերի նախարարին «հայրենիքի տուրքից» ձեռք բերված գումարների մասին 4 ամիսը մեկ⁴⁹ ներկայացնել առանձին հաշվետվություն⁵⁰:

Կանոնագրերի հաստատումից հետո ՀՀ ԱԳՆ գրություններ է ուղարկում արտասահմանյան երկրների դիվանագիտական ներկայացուցիչներին՝ տեղեկացնելով ԱԳՆ կազմում ստեղծված Գաղութային բաժնի և գաղթավայրերում ՀՀ օժանդակող միությունների մասին՝ առանձին ուշադրություն հրավիրելով «հայրենիքի տուրքին» վերաբերող կետերի վրա: Հանձնարարվում է գաղթավայրում, ի նկատի ունենալով տվյալ երկրի առանձնահատկություններն ու բնակության պայմանները, կատարել ուսումնասիրություն և հաղորդել, թե ինչ եղանակով է հնարավոր իրականացնել կանոնագրով հաստատված «հայրենիքի տուրքի» գանձումը ու անմիջապես սկսել աշխատանքներն այդ ուղղությամբ⁵¹: Միաժամանակ, անդրադառնալով ներգաղթին, տեղեկացվում էր, որ Հայաստանում կեցության հնարավոր պայմանների սղություն ու անհրաժեշտ մթերքների պակաս է, ուստի ցանկալի է մինչև գարուն (հրահանգները ուղարկվել են 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին-Ն.Ն.) գաղթականներ Հայաստան չգան, բացի տեխնիկական մասնագիտություններ ունեցողներից⁵²: Մասնագիտությունների գծով առանձին ցուցակ է կազմվել, թե նախարարությունների որ բաժնում ինչ մասնագետի կարիք կա⁵³:

Ուշագրավ է այն, որ հրահանգիչ նամակները ուղարկելիս միայն Պոլսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ էր հատուկ կարծիք ակնկալվում, քանի որ այստեղ, ինչպես նշված է նամակում, պատրիարքարանն արդեն իսկ հավաքում էր «հայրենիքի տուրք». «Մեզ ծանօթ է, որ այդտեղ Պատրիարքարանը հաւաքում է հայրենիքի տուրք, իսկ մեր առաջադրած նպատակների համար այդպիսի տուրքի գանձումը անհրաժեշտ է. հայկական հպատակության համար այդ տուրքը պիտի լինի պարտավորիչ»⁵⁴: Պահպանված փաստաթղթերում չկա արձանագրված որևէ տեղեկություն՝ արդյոք ՀՀ կառավարությունը՝ ի պատասխան իր վերոնշյալ հրահանգների, արտասահմանյան գաղթավայրերից ստացել է հաստատող նամակ կամ գրություն, անգամ հայկական գաղթավայրերում բուռն կերպով տարածվող այս գաղափարը զարմանալիորեն չի հիշատակվում ՀՀ կառավարությունում վերոնշյալ նախագիծը քննարկելիս: Ակնհայտ է, որ այս ծրագրի իրագործումը կկանոնակարգեր գաղթօջախների անկանոն նվիրատվություններն ու վճարները, որոնք համակարգված ու նպատակային բնույթ կստանային, սակայն, թերևս, ծրագիրը ուշացած էր. հայ-թուրքական պատերազմը և Հայաստանի խորհրդայնացումը կանխեցին նրա իրագործումը: Արդյունքում, «հայրենիքի տուրքի» գանձման օրենքը՝ Հայաստանի Հանրապետության

49 Անցագրերից, վիզաներից և հյուպատոսական այլ տուրքերից առաջ եկած հասույթների մասին ևս հաշվետվություն էր ներկայացվում ՀՀ արտաքին գործերի նախարարին 4 ամիսը մեկ անգամ:

50 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 566, թ. 7, տե՛ս նաև գ. 618, թ. 131-132:

51 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 618, թ. 143, 146, 147, 187:

52 Տե՛ս նույն տեղում, թ. 187, 211, 220, 223:

53 Տե՛ս նույն տեղում, թ. 144:

54 Նույն տեղում, թ. 128:

կառավարության կողմից ստեղծված նախագծին համապատասխան, չգործեց որևէ համայնքում, միայն շարունակվեցին անկանոն նվիրատվություններն ու օգնությունները, որոնք համակարգվում էին համայնքային տարբեր կառույցների, ֆոնդերի միջոցով կամ փոխանցվում անհատ անձանց կողմից:

Ի մի բերելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք նշել, որ հայրենիքի տուրքի գաղափարը, որը արծարծվել է Առաջին Հանրապետության շրջանում, իր արմատներով հասնում է մինչև Արևմտահայոց Ազգային սահմանադրություն: Այն իր զարգացման փուլերն է անցել՝ սկզբնապես հանդես գալով իբրև «ազգային տուրք»՝ ոչ թե բարեգործության, այլ պարտադիր վճարի ձևաչափով. հավաքված հասույթը ուղղվելու էր կրթական հաստատություններ, հիվանդանոցներ հիմնելուն և համայնքային կենսական այլ կարիքները հոգալուն: Հայոց ցեղասպանությունից հետո տարագիր հայությանը, անապաստան մնացած որբերին և Հայաստանի Հանրապետությանը օգնելու նպատակով «ազգային տուրքը» փոխակերպվեց «հայրենիքի տուրքի»: Տուրքի գանձումը պարտադիր բնույթ էր կրում և կիրառվեց հայկական գաղթավայրերում՝ համակարգելու համար անկանոն նվիրատվությունները: Իսկ արդեն Առաջին Հանրապետության կառավարությունը «հայրենիքի տուրքի» գանձման գաղափարը վավերացրեց առանձին նախագծով, որով նախատեսվում էր պարտադիր բնույթով գործադրել տուրքի գանձումը հայկական գաղթավայրերում՝ ի նպաստ Հայաստանի վերաշինության, ներգաղթի և գաղթականության աջակցության գործին:

Նարինե Մ. Նուշերվանյան – ԵՊՀ ՀՀԻ սփյուռքագիտական հետազոտությունների բաժին. չորս տպագրված գիտական հոդվածների հեղինակ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական Սփյուռքի ձևավորման գործընթացը, Սփյուռքի հայկական համայնքները, գաղթականության տեղաբաշխումը, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները, Սփյուռքի քաղաքական ներուժի ուսումնասիրությունը:

Էլ. հասցե՝ narine.nushervanyan@ysu.am

Summary

THE ORIGIN OF THE CONCEPT "TRIBUTE TO HOMELAND"

And attempts of its implementation in the First Republic of Armenia

Narine M. Nushervanyan

Key words – community, immigration, Republic of Armenia, community department, supporting unions, diplomatic representatives of the Republic of Armenia, tribute to homeland, Egyptian Armenian Relief Authority, national constitution.

For the first time, the article introduces the concept of "Tribute to Homeland", the dynamics of its development and its ratification by the Government of the First Republic of Armenia. Its roots go back to Western Armenian National Constitution (1860) and originally was taken as a "National Tax" as a form of obligatory payment and not as charity.

After the Armenian Genocide, the "National Tax" was transformed into "Tribute to Homeland" aiming to help Armenian refugees, orphans and the First Republic of Armenia. Once again tax collection became mandatory and it was implemented in the Armenian communities to coordinate irregular donations. The Government of the First Republic has ratified the concept of the "Tax for Homeland" with a separate draft, which envisaged the mandatory collection of taxes in the Armenian communities for reconstruction, immigration and support of refugees.

Though the Turkish–Armenian war (1920) and the Sovietization of Armenia prevented the full implementation of these programs, however, it is obvious that the Government of the First Republic has always focused on issues of refugees, dealt with the resettlement of the Armenians and the revival of the country.

ПРОИСХОЖДЕНИЕ ПОНЯТИЯ «ДАНЬ РОДИНЕ»

И попытки его применения в период Первой Республики

Нарине М. Нушерванян

Ключевые слова – община, иммиграция, Республика Армения, отдел колоний, вспомогательные союзы, дипломатические представительства, «дань родине», Орган, предоставляющий пособие живущим в Египте армянам, Национальная конституция.

В статье впервые представлено происхождение понятия «дань родине», динамика его развития и ратификации правительством Первой Республики. Она уходит своими корнями в Национальную конституцию западных армян (1860 г.) и первоначально взималась как «национальная дань» в форме обязательного платежа, а не благотворительности.

После Геноцида армян «национальная дань» преобразовалась в «дань родине», которая имела целью оказание помощи Республике Армения, армянским беженцам, бездомным сиротам. Сбор выплат вновь стал носить обязательный характер и использовался для систематизации на тот момент нерегулярных пожертвований в общинах армянской диаспоры. А уже правительство Первой Республики ратифицировало идею сбора «дань родине» в отдельном проекте, который предусматривал обязательное взимание денег в армянских колониях в пользу восстановления страны, репатриации и помощи беженцам. Несмотря на то, что армяно-турецкая война 1920 года и советизация Армении сорвали полноценное осуществление этих программ, тем не менее, очевидно, что правительство Первой Республики всегда держало в центре внимания проблемы беженцев, занималось вопросами репатриации армян и восстановления страны.

REFERENCES

1. Amerikahay gaghutner, «Verac'nund», Pariz, 1917, hulisi 14, N 1, ej 29-30 **(in Armenian)**.
2. Amsakan hashiv npastamatuyc marmnoy, «Arev», Agh'eqsandria, 1918, ogostosi 26, N 45, ej 3 **(in Armenian)**.
3. **Atom**, Azgayin sahmanadrutyunə. Gic'er mer mshakuyti patmutenen, Patmakan yev qnadatakan usumnasirutyun, K. Polis, 1914/ <https://goo.gl/jBLCos> / (mutq` 03.04.2019) **(in Armenian)**.
4. Azgayin qronik, «Arev», Agh'eqsandria, 1919, petrvari 19, N 120, ej 3 **(in Armenian)**.
5. Azgayin sahmanadrutyun hajoc, tpagr. Zareh N. Perperyani, K. Polis, 1908 **(in Armenian)**.
6. Azgayin turq, «Verac'nund», Pariz, 1919, N 6-7, ej 86 **(in Armenian)**.
7. **Epligh'atean M.**, Azgayin xnamatarutyun. Əndhanur tegh'ekagir, Ant'iliyas-Libanan, 1985 **(in Armenian)**.
8. HAA, f. 200, g. 566, t. 1, 6, 7 **(in Armenian)**.
9. HAA, f. 200, g 618, t. 6, 128, 131-132, 143-144, 146-147, 187, 211, 220, 223 **(in Armenian)**.
10. «Hayreniqi turq»ə gavarnernun mej, «Arev», Agh'eqsandria, 1917, dektemberi 3, N 89, ej 3 **(in Armenian)**.
11. «Hayreniqi turq»i patvirakutyunə Puqresh'i mej, «Arev», Agh'eqsandria, 1921, dektemberi 14, N 96, ej 3 **(in Armenian)**.
12. 1915-1965 hushamatean` Mec' egherni, patrastec Aharonean G., tp. «Atlas», Peyrut, 1965 **(in Armenian)**.
13. Hayastani Hanrapetutyun kar'avarutyun nisteri ardz'anagrutyunnerə 1918-1920 tt., kazm. A. Viranyan, Hayastani azgayin arkhiv, Ye., 2014 **(in Armenian)**.
14. Hayoc ekeghecakan iravunqə, A girq, ashxatutyun N. V. Meliq-Tangyani, Shushi, tp. Eghisabet M. Mahtesi-Jakobyani, 1903 **(in Armenian)**.
15. Hayreniqi turq, «Arev», Agh'eqsandria, 1923, marti 13, N 77, ej 2 **(in Armenian)**.
16. Hayreniqi turqə artasahmani mej, «Arev», Agh'eqsandria, 1921, hoktemberi 24, N 74, ej 2 **(in Armenian)**.
17. Hayreniqi turqə, «Apagay», Pariz, 1922, September 2, N 58, ej 2 **(in Armenian)**.
18. Kiprahay keanqen, «Arev», Agh'eqsandria, 1918, marti 6, N 128, ej 1 **(in Armenian)**.
19. **Malezean V.**, Aryuni turqə, «Arev», Agh'eqsandria, 1917, mayisi 4, N 152, ej 1 **(in Armenian)**.
20. Noter, Azgayin turq-koch' mə, «Verac'nund», Pariz, 1917, ogostosi 14, N 2, ej 54 **(in Armenian)**.
21. Npastamatuyci nor hanganakutyunə, «Arev», Agh'eqsandria, 1918, hunvari 7, N 104, ej 3, N 78, noyemberi 11, ej 3 **(in Armenian)**.
22. Parizi haykakan npastamatoyc yandz'nazh'ov, «Verac'nund», Pariz, 1918, N 6, 7, ej 155-157 **(in Armenian)**.
23. **Teqeyan V.**, «Hayreniqi turq»in ertord tarin, «Arev», Agh'eqsandria, 1918, septemberi 11, N 52, ej 1 **(in Armenian)**.
24. **T'opuzyan H.**, Egiptosi haykakan gaghuti patmutyuyun (1805-1952), Ye'r., 1978 **(in Armenian)**.

25. **Xatisyan A.**, Hayastani Hanrapetutyán s'agumn u zargacumə, Peyrut, 1968 **(in Armenian)**.
26. **Yeghiazaryan A.**, Ananyan M. yev urishner, Hayreniq-Spyurq haraberutyunnerə 1918 tvakanic minch'ev mer orerə, Ye'r., 2017 **(in Armenian)**.
27. **Zaven Arqeps.**, Patriarqakan hushers, vaveragirner yev vkayutyunner, Gahire, tp. Nor astgh, 1947 **(in Armenian)**.

ՀԱՅԵՆԻՔ

ԺԱ (ԺԷ) քարի, թիվ 2 (66), ասորի-հունի, 2019

ՎԼՎ համահայկական հանդես